Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՋԸ—ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

Ա. Ս. Ֆ. Խ. Հ. կից Հ. Ս. Խ. Հ.

ՊԱՋԸ—ԱՎԻԱՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ № 3

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## „ՊԱՋԸ—ԱՎԻԱՔԻՄԻ ՊԱՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ“

## (Պ. Պ. Բ.)

355(47)
Պ-24

ԵՐԵՎԱՆ

1931

01 MAR 2010

363(47)
Պ-94

Գլավլիտ. № 6295 Պատ. № 2496 Տիրաժ 5000

Պետհրատի տպարան, Յերևան

Հաստատված է ԽՍՀՄ-ՊԱՇԸ-Ավիաքիմ Միության ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 21 նոյեմբերի 1930 թ.
ԿԱԶՄ.—ՀՐ. Բ. ՎԱՐԻՉ Գ. ԼԵՎԻՆ

Հայերեն հրատարակությունը կատարված է ՀՍԽՀ Պաշք Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդի պատվերով։

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## I. ՊԱՇԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՊԱՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՊԱՇԸ-Ավիաքիմն իրեն խնդիր է դնում հասարակական կարևոր ոժանդակություն կազմակերպել՝ պաշտպանունակության ամրապնդմանը, ավիացիոն և քիմիական շինարարության ուժեղացմանը, ԽՍՀՄ գյուղատնտեսության ինդուստրացմանը և սոցիալիստական վերակառուցմանը։

Ընկերության հիմնական լոզունգն է՝ «ՊԱՇԸ-Ավիաքիմը ԽՍՀՄ խաղաղ աշխատանքի և պաշտպանության հենարանն է»։

2. Իկատարումն ՊԱՇԸ-Ավիաքիմի Համամիութենական 2-րդ Համագումարի և Համ ԼԿՅԵՄ ԿԿ 6-րդ պլենումի վորոշումների, ՊԱՇԸ-Ավիաքիմի գաղափարների ժողովրդականացման և մանուկներին յերկրի պաշտպանության ամրապնդման աշխատանքին ներգրավելու, նրանց սոցիալիստական հայրենիքը պաշտ-

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Госпубл. Библиотека
ՀՍԽՀ—ССРА

24436.17

(23309.60)

26 FEB 2014

40865

պանելու համար սկզբնական նախապատրաստություն տալու նպատակով, ինչպես և դասակարգային թշնամու դեմ աճող սերնդի համար մղվող ընդհանուր կռվին Պաջը-Ավխաքիմը մասնակից անելու համար, հաստատված է ՊԱՋԸ-Ավխաքիմի պատանի բարեկամների ինստիտուտը:

3. «ՊԱՋԸ-Ավխաքիմի պատանի բարեկամների» ստորին հիմնական կազմակերպություն հանդիսանում է «ՊՊԲ» խմբակը, որը կազմակերպվում է ֆաբրիկա-գործարանային ձեռնարկությունների, գյուղական, հիմնարկային, դպրոցային, մանկատնային, պիոներ-ջոկատի, պիոներ-բազաների և այլն՝ ՊԱՋԸ-Ավխաքիմի բջիջներին կից:

4. ՊՊԲ խմբակները տերիտորիալ կերպով կարող են, գտնվելով ՊԱՋԸ-Ավխաքիմի համապատասխան բըջիջի ղեկավարության տակ, ստեղծվել մանկատներին, դպրոցներին, պիոներ-բազաներին, ակումբներին, մանկական հրապարակներին, մանկական գրադարաններին և ընթերցարաններին կից և այլն:

5. ՊՊԲ խմբակը կազմակերպչորեն—վարժա-մեթոդական կողմով, իր պրակտիկ ամբողջ աշխատանքում և նյութական կողմից ղեկավարվում և ապահովվում է ՊԱՋԸ-Ավխաքիմի այն բջիջի կողմից, որին կից ինքն ստեղծված է. ՊՊԲ խմբակն իր բոլոր իրավունքները իրականացնում է նույնպես ՊԱՋԸ-Ավխաքիմի բջիջի միջոցով:

6. ՊՊԲ խմբակի աշխատանքի հիմնական բովանդակությունը կազմվում է այն խնդիրներին համապատասխան, որ հիշված են կանոնադրության 1-ին կետում:

7. Խմբակը աշխատանք է տանում ՊՊԲ և մանուկների մեջ ռազմա-քաղաքական և տեխնիկական գիտելիքներ արմատացնելու և բարձրացնելու, ինչպես և ակտիվորեն մասնակցում է ռազմական նախապատրաստությանը, որ անց է կացվում 1-ին և 2-րդ աստիճանի դպրոցներում, մանկատներում և պիոներ-ջոկատներում:

## 2. ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

8. Խմբակը ամբողջությամբ կազմակերպում է մասնակցում է մասսայական տնտեսա-քաղաքական և պաջը-ավխաքիմային կամպանիաներին, կիրառում է յերկրի պաշտպանության պրոպագանդի դեղարվեստական ձևեր և ակտիվորեն կապ է պահում Կարմիր բանակի զորամասերի հետ:

9. ՊՊԲ խմբակներում, դպրոցներում և պիոներ-ջոկատներում կազմակերպում է պրոպագանդ է անում հրաձգային սպորտը:

10. Մանուկների և պատանիների մեջ պաջը-ավխաքիմային անգրագիտության վերացման աշխատանք է տանում, պրոպագանդ է անում հօգուտ քիմզարարտացման և գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի յեղանակներ կիրառելու:

11. Կազմակերպում է ավիո-մոդելիզմի, պլաներիզմի, ֆռանի սպորտի աշխատանք, կազմակերպում է ծովագնացների, կապավորների, տեղագրողների, հետախույզների խմբեր և այլն:

12. Կազմակերպում է փոստային աղավնաբուծության և սպասարկու շնաբուծության մանկական կայաններ:

13. Անց է կացնում մասսայական բնույթի միջոցառումներ, ինչպես՝ ռազմա-տուրիստական արշավներ, ռազմական խաղեր, մանյովրներ, կազմակերպում է ռազմականացված մասսայական ճամբարներ, գիշերումներ և աշխատանքի այլ տեսակներ, վորոնք նպաստում են ռազմա-ֆիզկուլտուրային գիտելիքների և ընտելությունների գործնական ամրացմանը։

## 3. ՊՊԲ ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

14. ՊՊԲ խմբակ կարող է կազմակերպվել, յերբ առկա լինեն աշխատավորների վորդիներից առնվազն յերեք նախաձեռնող մանուկ, և նախապես համաձայնեցված լինի ՊԱԶԸ-Ավիաքիմի մոտակա բջիջի կամ ՊԱԶԸ-Ավիաքիմի ռայոնական (քաղաքային) խորհրդի հետ, վորն այդ խմբակը ամրացնում է ՊԱԶԸ-Ավիաքիմի վորոշ բջիջի։ Խմբակ կազմակերպելիս անհրաժեշտ է՝

ա) հարցման միջոցով պարզել ՊՊԲ մտնել ցանկացող մանուկների թիվը.

բ) հրավիրել կազմակերպչական ժողով, վոր անց է կացնում ՊԱԶԸ- Ավիաքիմի բջիջի կամ ռայխորհրդի ներկայացուցիչը.

գ) բջիջին կամ ռայխորհրդին թվական տեղեկություններ ներկայացնել խմբակի կազմի մասին, վորպեսզի ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջը կամ խորհուրդը հաշվառի ՊՊԲ անդամներին և հաստատի նրանց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տեղերում ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջ կամ խորհուրդ չլինելու դեպքում ՊՊԲ խմբակներ կարող են կազմակերպվել հետագայում ձևավորվելու պայմանով, խմբակի կազմակերպման



հարցը համաձայնեցնելով այն ձեռնարկության հիմնարկի, դպրոցի և այլն՝ կուսակցական կամ կոմերիտական կազմակերպության հետ, վորոնց կից կազմակերպվում է ՊՊԲ տվյալ խմբակը։

## 4. ՊՊԲ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. ՊՊԲ խմբակի անդամ կարող են լինել 7-ից մինչև 14 տարեկան մանուկները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Իրավազուրկների յերեխաները կարող են «ՊԱԶԸ-Ավիաքիմի պատանի բարեկամ» ընդունվել բյուրոյի, խմբակի վորոշումով և ՊՊԲ խմբակի անդամների ընդհանուր ժողովի հաստատումով, հետագայում պարտադիրաբար հաստատվելով ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջի ընդհանուր ժողովի կողմից։

2. 14 տարեկանից վեր մանուկները ցանկության դեպքում կարող են լինել ՊԱԶԸ-Ավիաքիմի անդամ։

16. ՊՊԲ յուրաքանչյուր անդամ պետք է կատարի այն բոլոր պարտականությունները, վոր իր վրա կդնի խմբակը, պարտավոր է լինել ակտիվիստ, առաջավոր, հասարակական աշխատանք կատարող և իր մանկական միջավայրում, դպրոցում և ջոկատում հարվածային. բարձրացնի իր գիտելիքները ռազմա-քաղաքական և տեխնիկական բնագավառում, ագիտացիա անի մանուկներին ՊՊԲ և տարիքավորներին ՊԱԶԸ-Ավիաքիմի անդամության գրվելու համար։

17. «ՊԱԶԸ-Ավիաքիմի պատանի բարեկամների»

համար անդամավճար սահմանված է տարեկան 20 կոպեկ:

Անդամավճարները մուծվում են ըստ տարվա չեռամսյակների:

Անդամագրքույկներ տրվում են տարվա առաջին չեռամսյակի համար անդամավճար մուծելուց հետո:

18. ՊՊԲ անդամները դուրս մնացած են համարվում՝

ա) այդ մասին հայտարարություն տալով,

բ) 6 ամիս շարունակ անդամավճար չմուծելու դեպքում.

գ) արատավորող արարքի դեպքում, սիստեմատիկորեն դիսցիպլինան խախտելու և ՊՊԲ անդամի պարտականությունները չկատարելու համար:

Դուրս անելը վերապահվում է ՊՊԲ խմբակի բյուրոյին. դուրս արվածն իրավունք ունի բյուրոյի վորոշումը բողոքարկելու ՊՊԲ. խմբակի ընդհանուր ժողովին կամ ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջին:

19. ՊՊԲ-ից հեռացողներն իրավունք չունեն իրենց արած մուծանքները յետ պահանջելու, նույնպես և կորցնում են ՊՊԲ և ՊԱՋԸ-Ավիաքիմի նշանը կրելու և համազգեստը հագնելու իրավունքը:

## 5. ՊՊԲ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԳԱՆԸ

20. ՊՊԲ խմբակի ղեկավար գերագույն որգանը նրա անդամների ընդհանուր ժողովը կամ կոնֆերանսն է:

21. Ընդհանուր ժողովն իր կազմից ջոկում է՝ խմբակի բյուրո և վերստուգիչ որգան (լիագոր կամ հանձնաժողով) 6 ամիս ժամանակով:



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խմբակի բյուրոյի անաշխատունակության դեպքում այն կարող է ժամկետից առաջ եվ վերընտրվել, իսկ բյուրոյի առանձին անդամները կարող են յետ կանչվել բյուրոյի կազմից՝ համաձայն ընդհանուր ժողովի վորոշման:

22. Խմբակի ընդհանուր ժողովները կամ կոնֆերանսները հավաքվում են ամիսը մեկ անգամից վոչ պակաս:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ՊՊԲ խմբակի ընդհանուր ժողովը օրինական է համարվում խմբակի բոլոր անդամների $^{1}/_{3}$-ի ներկայության դեպքում:

23. Խմբակի բյուրոն հանդիսանում է խմբակի ղեկավար որգանը ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում: Բյուրոն ընտրվում է խմբակի ընդհանուր ժողովի կողմից հետևյալ կազմով.

ա) 10-ից մինչև 15 անդամ ունեցող խմբակներում՝ բյուրոյի 3 անդամ և 1 լիագոր խմբակի նյութական-ֆինանսական գործերը վերստուգելու.

բ) 16-ից ավելի անդամ ունեցող խմբակներում բյուրոյի 5—7 անդամ և 3 վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

24. Խմբակի բյուրոյի կազմի մեջ պարտադիրաբար պետք է մտնի ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջի ներկայացուցիչը, վորին բջիջը ջոկում է իբրև բջիջի լիագոր մանուկների մեջ աշխատանք տանելու համար, պետք է մտնի նույնպես պիոներ-ջոկատի խորհրդի ներկայացուցիչը, յեթե խմբակն ստեղծված է պիոներ-ջոկատին կից:

25. Խմբակի բյուրոն իր կազմից ջոկում է մեկ պատասխանատու քարտուղար, սեկտորների կազմա-

կերպիչներ և անդամավճարների հավաքարար։ Սեկտորների կազմակերպիչներ կարող են նշանակվել խմբակի ակտիվի կազմից։

26. Խմբակի բյուրոյի նիստեր տեղի յեն ունենում ամսական ամենաքիչը յերեք անգամ։

27. Խմբակի բյուրոյի նիստերն օրինական են համարվում, յեթե ներկա յեն լինում բյուրոյի անդամների կեսից վոչ պակասը։ Խմբակի բյուրոն կարող է գումարել ընդլայնված նիստեր, հրավիրելով ակտիվը։

28. Բյուրոն իր աշխատանքի համար խմբակի ընդհանուր ժողովին հաշիվ է տալիս առնվազն 3 ամիսը մեկ անգամ։

29. Կազմակերպվում են հետևյալ սեկտորները.

ա) ագիտացիոն. խնդիրներն են՝ մասսայական տնտեսա-քաղաքական և պաջը-ավիաքիմային կամպանիաներին մասնակցելու միջոցառումներ անցկացնել, ոգնել բջիջին և պաջը-ավիաքիմային մամուլը անդամների մեջ տարածել.

բ) հրաձգային. խնդիրներն են՝ հրաձգային սպորտը զարգացնել «ՊԱՋԸ-Ավիաքիմի պատանի բարեկամների» մեջ, հսկել զենքի կացությանը (փողային և փոքր տրամաչափի); հրահանգչական աշխատանք (ադեղից և հրացանից արձակելու ուսուցման), հրաձգային սպորտի մրցակցություններ անցկացնել.

գ) քիմիական. խնդիրներն են՝ ռազմա-քիմիական անգրագիտության վերացման աշխատանք, պարզ քիմլաբորատորիա ստեղծել, քիմիական և տեղական պարարտացում կիրառելու պրոպագանդ (կրային), պայքար վնասատուների և մակաբույծների դեմ և այլն.



դ) ավիացիոն. խնդիրներն են՝ մոդելա-կառուցում, ֆոռանի սպորտ, պլաներիզմ և այլն.

ե) կապի. ֆունկցիաներն են՝ կապի, ազդանշանման հարցերի ուսումնասիրություն, մասնակցություն խմբակների ուսումնական արշավներին և ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջների ռազմական պարապմունքներին, սպասարկու շնաբուծության և փոստային աղավնեբուծության պրոպագանդ։

Սեկտորների կազմակերպումը կախված է խմբակի ունեցած հնարավորություններից։

ՊՊԲ խմբակի բոլոր սեկտորներն աշխատում են ՊԱՋԸ-Ավիաքիմի համապատասխան սեկտորների ղեկավարությամբ։

30. Մանկական գործնական կազմակերպությունների ամբողջ աշխատանքը, այն է՝ խմբակներ, պարզ ավիա-սպորտային (ֆռանի, մոդելային սպորտ), քիմիական պարզ լաբորատորիաներ, շքերթներին մասնակցություն, դաշտերթ և այլն, ինչպես և «պաշտպանության հեկտարների» և հանքային պարարտացման կիրառման, ցուցադրական հողամասերի սերմանում և այլն՝ ՊՊԲ խմբակի բյուրոն անց է կացնում ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջի ղեկավարությամբ։

ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջը ապահովում է նաև «ՊԱՋԸ-Ավիաքիմի պատանի բարեկամների» մասնակցությունը բջիջի գործնական կազմակերպությունների աշխատանքին, ամենասերտ կոնտակտ ապահովելով համապատասխան պիոներական և կոմյերիտական կազմակերպությունների հետ աշխատելիս և դպրոցականների հետ աշխատելու պայմաններում՝ կոնտակտ դպրոցական կազմակերպությունների հետ։

31. «ՊԱԶԸ-Ավիաքիմի պատանի բարեկամների» վերադաս ղեկավար օրգանը շրջանում ՊԱԶԸ-Ավիաքիմի Շրջ. Խորհուրդն է, որին կից ստեղծվում է մանուկների շրջանում կատարվող աշխատանքի խորհրդակցություն, որին ղեկավարում է ՀամԼԿՑԵՄ Ռկ տեղական պիոներ բյուրոյի համաձայնությամբ ռայխորհրդի միջից ջոկած աշխատավորը: Մանուկների մեջ տարվող աշխատանքի շրջ. խորհրդակցության կազմի մեջ մտնում են պիոներ բյուրոյի, ԲԳԿԲ զորամասի, ժողլուսվարության և առողջապահության բաժինների գործարտեղկոմի և շահագրգռված ուրիշ կազմակերպությունների ներկայացուցիչները:

32. Մանկական համանման խորհրդակցություններ ստեղծվում են նաև հանրապետական խորհուրդներին կից:

33. ՊԳԲ խմբակն իր կասսան չունի և գոյությունը պահում է ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջի բյուջեյով:

34. Բոլոր միջոցները, այն է՝ ա) ՊԳԲ անդամավճարների մուծումների ամբողջ գումարի $35^{0}/_{0}$-յա մասնահանումները, բ) ՊԳԲ խմբակի նախաձեռնությամբ անցկացրած ժողովարարությունների միջոցով ու զանազան միջոցառումներով (մանկական ներկայացումներ, գրքերի, նշանների վաճառք) ստացած բոլոր եկամուտների $100^{0}/_{0}$-ը և այլն՝ մուծվում են ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջի կասսան և ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջի կողմից ծախսվում են ըստ իրենց ուղղակի նշանակման՝ ՊԳԲ խմբակի աշխատանքների վրա:

40.865

ՀՀ Ազգային գրադարան
NL0225038